




ՈՒՍՏԸՆԴՀ Հայն

ՀԱՄԱՊԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ
ՄԱՐՏ, 2009
ԹԻՎ 2 (25)

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- Արցախի ուսանողական կառույցներն ու նրանց գործունեությունը
- Մեր օրերի «Անառակ որդու վերադարձը
- Ֆինանսատնեսական ճգնաժամի ազդեցությունը ուսանողների վրա

Ծնորհավոր կահաց միամյանք...



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ


Վերջ դրվեց բուհերում կոռուպցիայի դեմ պայքարին



Օ՛, մարդկային գթասրտություն, հեկեկա ողբածայն, քանի որ հայոց աշխարհի քրիստոնյա երիտասարդները ուսնահարել են արժանիքներդ: Մանկությանս հոլշերում պահպանվել են դեռ հիմն ու բարի ժամանակները, երբ մեր ժողովրդի «միջին խավի չիղփացած ներկայացուցիչները (որը նոյնն է, թե ազնվության լուսի փշուրները նյութամոլության ժիրաններից մի կերպ փախցրած մարդիկ) նույնիսկ առօրյա գրուցներում որևէ մեկին որևէ մեղադրանք ներկայացնելիս բազմից աստվածավախորեն գոնե մտովի ստուգում էին, թե հիմնավոր է արդոք այդ մեղադրանքը: Այդ ի՞նչ պատահեց, որ այդ նոյն բարոյական սերնդի ծոցից ելած մեծաքանակ երիտասարդները վերջերս վարվեցին այնպես, ինչպես վայել չէ մարդասեր, մեծահոգի, քրիստոնյա հային: Ամոթի տախտակին գամել մի խումբ դասախոսների նկարները և դրանով իսկ հրապարակայնորեն քարկոծե՞լ նրանց: Ու այս ամենն անվանել պայքար կոռուպցիայի դե՞մ: Ծիծաղելի է: Այս ամենի վրա կարելի է դառնորեն, երկար ու հիստերիկ ծիծաղով ծիծաղել: Ծիծաղելի

ուսանողների գրավոր խոստովանությունների հիման վրա կաշառակեր դասախոսներին հայտնաբերելու մեթոդը (կարծես թե չեն կարող լինել սրիկա ուսանողներ, որոնք կարող են մատնել և անմեղ դասախոսի): Իսկ կաշառակերությամբ ամենահայտնի ֆակուլտետներից գրեթե ոչ մեկի նկարը չես կարող գտնել: Ծիծաղելի է այն, որ դասախոսների նկարների կողքին չկան ուսանողների նկարներ. ազնիվ պայքար եք տանում, ուրեմն մինչև վերջ ազնիվ եղեք:

Իհարկե, կաշառակերության դեմ պայքարել պարտավոր ենք բոլորս, բայց արդարամտորեն, հիմնավորված փաստարկներով ու ամենայն պատասխանատվությամբ և ոչ թե հրապարակավ քարկոծմամբ, անօրինականությամբ օրենք պահանջելով, այսինքն՝ մեղքի դեմ մեղսալի պայքարով: Բայց չէ՞ որ կաշառակերությունը միակողմանի հասկացություն չէ. Եթե կա կաշառակեր, կա նաև կաշառատու: Այսպիսով, մեղավորությունը հավասարապես երկուսինն է: Այդ դեպքում ինչու՞ չփակցնենք շքեղ մեքենայով տարբերակվող ու դասերից անտեղյակ «գերազանցիկ ուսանողի նկարը ևս: Գուցե հաջորդ քայլը դա լինի...



«Զինվորի մայր . Բանակը համալրման խնդիր ունի



Մարտի 10-ին Հայկական պետական մանկավարժական համալսարանում անցկացվեց դասախոսություն «Զորակոչի և միգրացիայի հիմնախնդիրներ թեմայով»:

Բանախտու տիկ. Գրեստա Միրզոյանը («Զինվորի մայր ՀԿ-ի նախագահ») ներկայացրեց միգրացիայի խնդիրները և հետևանքները Հայաստանում: Համառոտ ներկայացվեց «Զինվորական ծառայությունը և միգրացիայի հիմնախնդիրները գրքույթը, որը հրատարակել է «Զինվորի մայր ՀԿ-ը՝ «Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությամբ: Գրքույկում նշվում է, որ «ԽՄՀՍ վիլուգնան, ինչպես նաև պատերազմի հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական վատթար պայմանները հանգեցրեցին Հայաստանի բնակչության արտահոսքի զգալի աճի: Ըստ բանախոսի, արտազարդում էին հիմնականում ընտանիքներով, որոնց մեջ, անշուշտ, կային անչափահաս տղաներ: Այսօր այդ տղաներն արդեն չափահաս են և կանգնել են լուրջ փաստի առջև. նրանք չունեն անձը հաստատող ոչ մի փաստաթուղթ, այսինքն՝ զրկված են քաղաքացու բոլոր իրավունքներից: Վերոնշյալ կազմակերպությունը դեռևս 1997 թվականից իրականացնում է տարբեր ծրագրեր՝ ուղղված միգրանտ զինվորներին առնչվող հիմնախնդիրների լուծմանը: ՀԿ-ն բացատրական աշխատանքներ է տանում զինվորների իրավունքների և պարտավորությունների, իսկ խախտման դեպքում՝ օրենքով սահմանված պատիժների ու տույժերի վերաբերյալ: «Մենք այսօր ազգային բանակի

համալրման խնդիր ունենք: Մեր բանակը պետք է լինի այնքան, որքան կարողանա պաշտպանել մեր սահմանները, - նշում է տիկ. Միրզոյանը:

Միջոցառման ընթացքում ուսանողները խոսեցին իրենց մտահոգող խնդիրների՝ մասնավորապես բանակում տիրող ոչ լավ պայմանների ու խորական վերաբերնունքի մասին: Ոմանց կարծիքով, վերջին տարիներին մեր բանակում ծառայության պայմանները բարելավվել են, սակայն անելիք դեռ շատ կա: Քննարկմանը մասնակցած պրոռեկտոր Եղիգարյանն էլ ուներ սեփական մոտեցումը. «Եթե վստահ լինեք, որ բարձրաստիճան պաշտոնյայի զավակն էլ ծեզ հետ միասին ծառայում է միևնույն պայմաններում, ապա դուք ծեզ ավելի լավ կզգաք :


Նայելով քարտեզին՝ մտորում եմ... Մեր երեմնի հայրենիքից քանի տոկոսն է մեզ մնացել այսօր... Մոտ 10 000 000 հայերից, քանի տոկոսն է այսօր ապրում Հայաստանում... Այս բոլոր պատճառները հասկանալով՝ ևս մեկ անգամ հանոգվում եմ, որ պետք է դիմանալ մեր բանակի դժվար պայմաններին, պետք է ամրապնենք ու պաշտպանենք մեր հայրենիքի սահմանները՝ միշտ օրակարգի վրա ունենալով ԱՉԱՏ, ԱՆԿԱԽ և ՄԻԱՑՅԱԼ Հայաստանի տեսլականը...

Այգ Պետրոսյան

Արցախի ուսանողական կառույցներն ու նրանց գործունեությունը

Ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրներում, այնպես էլ Արցախում, բնակչության ամենաակտիվ խմբերից մեկը, եթե ոչ ամենաակտիվը՝ ուսանողությունն է: Այսօր Արցախում գործում են շուրջ մեկ տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ ուսումնառում են հազարավոր ուսանողներ: Երկրի ամենամեծ ուսումնական հաստատությունը Մայր բուհն է՝ Արցախի պետական համալսարանը, որտեղ սովորում է շուրջ վեց հազար ուսանող Արցախի բոլոր շրջաններից, մայրաքաղաքից ու Յայաստանի Հանրապետությունից: Բոլոր համալսարաններում ուսանողական կյանքը հետաքրքիր դարձնելու, ուսանող-դասախոս և համալսարանի ղեկավարություն փոխհարաբերությունները պահելու և զանազան այլ ուսանողական միջոցառումներ կազմակերպելու առաքելությամբ են լիազորված ուսանողական խորհուրդները: Բացի ներհամալսարանական միջոցառումներից, ուսանողները ճանակցում են նաև տարբեր հանրային, բարեգործական, տոնական միջոցառումների, այցելում են մանկատներ, ծերանոցներ, սոցիալապես անապահով ընտանիքների և այլն: Արցախում գրեթե բոլորին հայտնի է ներհամալսարանական, այնուհետև բուհերի միջև կազմակերպվող «Ուսանողական գարուն» մրցույթ-փառատոնը, որը կատարյալ տոնի է վերածվում ուսանողության շրջանակ-ներում:

Ուսանողական ակտիվը ճաս է կազմում Արցախում գործող տարբեր երիտասարդական կազմակերպությունների:




Ուսանողներն անդամակցում են տարբեր երիտասարդական-հասարակական, քաղաքական, բնապահպանական, մշակութային կառույցների: Մանավարդ շատ են կուսակցությունների երիտասարդական թևերին անդամակցող ուսանողները: Զգլված օրենքի համաձայն՝ կուսակցությունների երիտասարդական թևերին անդամակցում են մեծամասամբ բուհերի հումանիտար բաժինների ուսանողները:

Արցախում գործում են շուրջ երկու տասնյակ երիտասարդական կազմակերպություններ, որոնք կենտրոնացված են մայրաքաղաքում, սակայն որոշները մասնաճյուղեր ունեն շրջաններում: Երկրում գործում է անկախ երիտասարդության խորհուրդ, ինչպես նաև Յայ Արաքելական Եկեղեցու Արցախի թեմին կից երիտասարդական խորհուրդ: Այս երկու խորհուրդների անդամ կազմակերպություններում գերակշռող մաս են կազմում ուսանողները:

Երկրում գործող արտահամալսարանական միակ կուսակցական ուսանողական կառույցը՝ ՀՅԴ Արցախի «Արամ Մանուկյան» ուսանողական միությունն է, որի գործառույթներն, ի տարբերություն Արցախի այլ երիտասարդական կացմակերպությունների, ավելի շատ քաղաքական են: Վերջերս Արցախի երիտասարդության և ուսանողության շրջանում հայտնություն էր նոր՝ երիտասարդական քաղաքական կառույցի ծնունդը: Արցախի պետական համալսարանի մի խումբ ուսանողների նախաձեռնությամբ ստեղծվեց «Արցախի երիտասարդ քաղաքագետների ակունք -ը: Վերջինս ամեն շաբաթ ուսանողության շրջանակներում կազմակերպում է քննարկումներ որևէ քաղաքական հարցի, իրադարձության վերաբերյալ:

Ուսանողների ներգրավվածությունը թե՛ երիտասարդական-հասարակական, թե՛ քաղաքական կազմակերպություններում, խոսում է երկրում երիտասարդական դաշտի կայացման գործընթացի և քաղաքացիական հասարակության կերտման գործում ուսանողության ակտիվ մասնակցության մասին, որն, իհարկե, միայն ողջունելի է:



Հայկական շարունակականություն-3

Դուշման Վարդան. «Երանի նրան, ով Մասիսը տուն կբերի



Մարտի 9-ին լրացավ Արցախյան ազատամարտում գոհված Վարդան Ստեփանյանի՝ Դուշման Վարդանի, ծննդյան 43-ամյակը: Ծննունդով Երևանցի Վարդանը սովորել ու ավարտել է Երևանի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը: 1984-86 թթ. ծառայել է Խորհրդային բանակում՝ Աֆղանստանում: 1988թ.-ից ներգրավվել է ազգային ազատագրական շարժմանը, մասնակցել Արցախի ինքնապաշտպանության և ՀՀ սահմանների պաշտպանության համար մղված գրեթե բոլոր մարտերին, Շուշիի ազատագրմանը: 1992թ.-ի հուլիսի 3-ին՝ մարտական կարևոր առաջադրանք կատարելիս, ԼՂՀ Մարտունու շրջանի Նյուրիշեն գյուղի մոտ ականի պայթյունից զոհվեց դաշնակցական առաջին գումարտակի մարտիկ Վարդան Ստեփանյանը: Կռվում էր բռնագրադրած նախնիների ոխն ու զոհված ընկերների վրեժը սրտում: Դազանչեցոց եկեղեցու մոտ, պապերի շիրիմների կողքին, տուն էր վեցորեկ՝ հաղթանակից հետո արցախում էր ապրելու: Ավաղ, չտեսավ հաղթանակը, զոհվեց:

Կանադայի հրեական լոբբին ըմբոստանում է Թուրքիայի հակահայկական քաղաքականության դեմ

The Canadian Jewish news

Թուրքիայի հրեաները ռասիզմի դեմ պայքարի օրենք են պահանջել երկրի իշխանությունից: Ըստ թուրքական «Սարահ օրաթերթի» Թուրքիայի հրեական համայնքի ղեկավար Սիլվի Օվատիան Օսխագահ Աբդուլլահ Գյուլի հետ հանդիպմանն ասել է, որ հակասեն հիտականության ալիքը բարձրացել է երկրում և հրեաների մկատմանը ռասիստական ու վիրավորական հայտարարությունները պետք է քրեորեն պատժվեն՝ ինչպես Գերմանիայում, Ֆրանսիայում և շատ երկներում: Միաժամանակ, ոչ միայն հակասեն հիտականության, այլև հակահայկական արշավին վերը տալու կոչ է արել Կանադայի հրեական համայնքի ակնառու ղեկավարներից մեկը: Կանադայի հրեական համայնքի պաշտոնաթերթ «Քենեդիզն ջիուիշ նյութ -ում» «Դրեաները պետք է ընդդիմանան Յայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողական քաղաքականության խորագրով ծավալուն հոդված է գրել հայտնի իրավապաշտպան Նորման Եպսթինը: Գազայի դեպքերից հետո հսրայելի քաղաքականության քննադատության առիթով հոդվածագիրը խորհուրդ է տալիս Ամեկարային նայել սեփական պատմության մութ էջերին, մանավանդ որ այդ երկիրն այնքան էլ չի փայլում մարդու իրավունքների պաշտպանության գործում: Եպսթինը նշում է, որ Թելավիվը, օգտագործելով իր լճակները, Ամերիկայի հրեական լոբբիի միջոցով տարիներ շարունակ պաշտպանել է Ամեկարայի տեսակետը Յայոց ցեղասպանության հարցում, թեև,-

շարունակում է հոդվածագիրը, հայերի ցեղասպանության փաստն անվիճելի է: «Յայ մտավորականությունը ոչնչացվեց 1915-ի ապրիլի 24-ին, մարտիկ, այդ թվում՝ տարեցներն ու երեխաները, խոշտագնվեցին ու սպանվեցին: 1 մլն 800 հազար հայ սպանվեց սեփական երկրում. ավելի քան 90 տարի Թուրքիան հանցագործություն է համարում ցեղասպանության մասին խոսելը...սա՝ մարդու իրավունքների պաշտպանությունը, - հարցել է կանադացի իրավապաշտպանը՝ ավելացնելով, որ հենց Յայոց ցեղասպանության ժխտումն է հանցագործություն: Նա շեշտել է, որ համայն աշխարհի հրեաները բարոյական պատասխանատվություն ունեն՝ չընդդիմանալու Յայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, իսկ Խորայի պետությունը, որը Յոլոքոսից փրկվածների հայրենիքն է, պետք է չուրանա Յայոց ցեղասպանության փաստը:»

Աբրահամ Գասպարյան



«Օհաննեսը պարտք կանի, բայց իր հյուրերին առանց ձաշի չի ճանապարհի



Ասում են՝ հանճարները հարյուր տարին մեկ են ծնվում, և միգուցե նախասահմանումն էր, որ երկնեց մեծն հայրենանվեր հայորդուն: Թումանյանն աշխարհ եկավ հայ գրականության դասական շրջանում, երբ հայ իրականությունը քառային էր: Մի քառու, որը նա պիտի դարձներ լույսի շող ժամանակի մռայլ իրականության մեջ: Նա մեծ մարդասեր էր, գորոդ, իրապարակախոս, քաղաքական ու հասարակական գործիչ, ազգային ազատագրական պայքարի մեջ զատագով: Նա մտահոգ էր հայության ճակատագրով և երազում էր տեսնել անկախ Հայաստանը, բայց, ցավոք, Հայաստանի անկախությունը կարծ տևեց: Սա խոր վիշտ պատճառեց բանաստեղծին:



Եղեռնից ժառանգված ապրումները դառնորեն ամրացել էին բանաստեղծի հոգում, և որպես Հայաստանի օգնության կոմիտեի նախագահ՝ նա դարձավ Եջմիածնի որբանոցում հավաքված արևմտահայ գաղթական մանուկների պաշտպանն ու ապավենը:

Բանաստեղծի՝ հայության ծանր վիճակը բարելավելու ցանկությունն իր դերն ունեցավ «Վերնատուն խմբակի հիմնադրման գործում, որը ոչ միայն գրական, այլև քաղաքական-հասարակական նշանակություն ուներ: Հայության հասարակական կյանքի վերաբերյալ Թումանյանը հաճախ մտքեր էր փոխանակում «Վերնատան ականավոր անդամներից մեկի՝ Լևոն Շամբի հետ:

Թումանյանն առաքինի և ազնիվ մարդ էր՝ ազնվական բարի ամենահսկական ինաստով: Հյուրասեր էր ու հյուրընկալ:



Ահա թե ինչ է պատմում բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանն իր հոր հյուրասիրության մասին. «Մի առավոտ Թումանյանն արթնանում է և տեսնում, որ իր կինը՝ Օլգան, կրակի վրա ինչ-որ բան է եփում: Նա մտածում է, թե դա խաչ է՝ չիմանալով, որ կաթսայի միջինը ընդամենը լվացք է (նախկինում լվացքը կաթսայի մեջ եռացնում էին): Նա, առանց կնոջը նի խոսք ասելու, դուրս է գալիս տնից և ճանապարհին ում տեսնում է, իրավիրում է իրենց տուն՝ խաշ ուտելու:»

Երբ Հյուրերը հավաքում են, Թումանյանը դիմում է կնոջը.

-Տիկին Օլգա, խաշը բեր:

Կինը, թե ի՞նչ խաչ, կաթսայում ես լվացք էի եռացնում: Թումանյանը պատասխանում է:

-Օհաննեսը պարտք կանի, բայց իր հյուրերին առանց ձաշի չի ճանապարհի:

Թումանյան հանճարը կապրի դարերում՝ շնորհիվ իր հզոր տաղանդի, մեծ մարդասիրության և իր մեծ գործի:

Սյուլգաննա Կարապետյան

Մեր օրերի «Անառակ որդու վերադարձը»



«Անառակ որդու վերադարձը» ֆիլմը, որն արդեն հասցել է արձագանք գտնել 2008-ին Պուսանի, 2009-ի հունվարին Գյոթենբրուրգի, իսկ փետրվարին Բելգրադի միջազգային փառատոններում, հայրենիքում կցուցադրվի 2009-ի սեպտեմբերից: Ըստ ֆիլմի ռեժիսորներ Արսեն Ազատյանի և Նարիմեն Սկրուչյանի՝ մինչև Հայաստանում ցուցադրվելն այն կմասնակի նաև Համբուրգի, Սիդնեյի, Էդինբուրգի, Լիսաբոնի, Կալկաթայի, Բուլսարիատի, Հայֆայի և այլ կինոփառատոնների: «Արվեստի ֆիլմերը նախ պետք է անցնեն միջազգային գովազդային արշավի միջով, գնահատվեն արտերկրում, որից հետո միայն հայրենիքում, քանի որ եթե նշվում է, որ ֆիլմը մասնակցել է 10-15 միջազգային փառատոնի, ապա հանդիսատեսն ավելի պատրասված է գալիս այն դիտելու: Եթե, իհարկե, դա գուտ առևտրային, շահութաբեր կինո չէ, -այսպես են ռեժիսորները բացատրում ֆիլմը նախ արտերկրում ցուցադրելու հանգանաքը: Ֆիլմի հիմքում Աստվածաշնչյան «Անառակ որդու վերադարձը» առակն է՝ մեր օրերում: «Ըստրը բավական փոփոխությունների ենք ենթարկել, քանի որ փոխվել են նաև ժամանակները: Այսօր առաջին ավան է մոլուկ նյութականը, և այդ պատճառով մի քիչ այլ հարթության վրա են հայր-որդի-եղբայրներ-ընտանիք հարաբերությունները, -ասում է Նարիմեն:

Մկրտչյանը: Իսկ Արսեն Ազատյանն ավելացնում է. «Մենք գուտ դրամատուրգիական և ռեժիսորական փոփոխություններ ենք արել, ավելացրել ենք նոր կերպարներ, պերսոնաժներ, հիշողություններ, մանկությունն, սեր և այլն, սակայն դրանից առակի հմաստը, գաղափարը չի փոխվել:

88 րոպե տևողությամբ այս ֆիլմը բարոյահոգեբանական դրամա է: Երիտասարդը, ով զգում է իր ճակատագրի համար, վերադառնում է տուն՝ հոյսով, որ հայրը կների: Ֆիլմի գլխավոր հերոսներին մարմնավորել են Արմեն Զիգարիսանյանը և Սիրայել Զանիթելյանը: Ֆիլմի հիմքում հայկական ընտանիքի պատմություն է, չնայած, ըստ հեղինակների՝ ֆիլմը բավական լավ է ընկալում նաև օտար հանդիսատեսը: «Պուսանի կինոփառատոնում կորեացի հանդիսատեսը, որ ոչնչով նաման չէ մեր ժողովրդին, զարմանալի ընկալում ունեցավ, շատ լավ ու ծիշտ էն ընկալել և ասում էն, որ իրենց մոտ էլ կան «անառակ որդիներ», որ ուզում են վերադառնալ, -պատմում է Նարիմեն Սկրուչյանը:

Դեռևս 1990թ. ռեժիսոր ամուսինների կողմից ստեղծված «Այսօր-Դյուս» ֆիլմարտադրությունում այս 20 տարիների ընթացքում 3 լիամետրած և 10 կարճամետրած ֆիլմ է նկարահանվել, որոնք բոլորն էլ միջազգային էկրաններ են բարձրացել, սակայն այդ



ընթացքում նրանք որևէ ֆինանսական օժանդակություն չեն ստացել: Եվ բոլոր ֆիլմերը նկարահանվել են ինքնաֆինանսավորմամբ: «Հեղինակային ֆիլմերը փառատոնային ֆիլմեր են, որոնք ավելի շատ երկրին հիմք են բերում, քան ֆինանսական մեծ շահ, - ասում է Արսեն Ազատյանը: Սակայն նաև հիշեցնում, որ աշխարհի գրեթե բոլոր երկրներում, այդ թվում նաև՝ հարևան պետություններում անհատ ֆիլմարտադրություն պետական ստրահաներ են ստանում, իսկ Հայաստանում՝ ոչինչ: «Նույնիսկ նորմալ կինոթատրոններ գրեթե չկան, որ կարողանաս սեփական արտադրանքդ սեփական երկրում սպառել և գոնե քո ծախսերդ հոգալ: Եղած կինոթատրոններն ել, հատկապես մարզերում ժամանակակից տեխնիկայով ապահոված չեն, ինչն ել ցուցադրման դեպքում կազդի ֆիլմի որակի վրա, - ասում են ռեժիսորները: Սակայն անգամ չունենալով պետական մոտեցում կինոյի հանդեպ՝ կինոռեժիսորների համոզմամբ՝ Հայաստանում թե՛ խորհրդային միության տարիներին, թե՛ այսօր կան ստեղծագործական պոտենցիալ ունեցող լավ ռեժիսորներ, այդ թվում նաև՝ երիտասարդներ: Բայց խոսքն իրական հեղինակային ֆիլմերի մասին է:

Մարիա Կարաթորոսյան

Ճշմարտությունը՝ լուսանկարչի աչքերով

«Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով, և այժմ մարդը ստեղծել է Աստծուն պատկերող մի սարք, և նա իր պատկերի փոխարեն արդյոք աշխարհ չի ուղարկի Սատանայի պատկերը .

<Leipzig Citi Advertiser>-ի հրապարակումներից,
1930-ական թթ. Գերմանիա



«Այս մեծ աշխարհին նայում եմ մի փոքրիկ պատուհանից, և այդ պատուհանից ամեն ինչ ավելի պարզ ու ակնառու է երևում, այդ պատուհանից տեսնում եմ գլխավորը ընդհանուրի միջից և այդ գլխավորով եմ առաջնորդվում, քանզի այդ պատուհանն ինձ ուղեկցում է ամենուր և ամեն օր և դարձնէ իմ կյանքի անբաժանելի մասնիկն ու իմ լավ ընկերը, իսկ իմ լավ ընկերն իս լուսանկարչական ապարատն է, -ասաց լուսանկարիչ Նարեկը:

Նարեկի համար լուսանկարչությունը դարձել է ոչ միայն հաճելի նախասիրություն, այլև կարևոր մասնագիտություն:

«Լրագրողները ներկայացնում են պատմություններ, իսկ լուսանկարիչները պատկերում են մարդկանց ու առարկաները: Ֆոտոֆունալիստը համարում է այս երկուսը, քայլ մի տարբերությամբ. ֆոտոֆունալիստը նկարում է մարդկանց ու առարկաների շուրջը կատարվող գործողությունները: Շատերի համար դժվար է հասկանալ տարբերությունը, քայլ երբ սովորական լուսանկարն ու ֆոտոլուրը դնում են կողք կողքի, արդեն ամեն ինչ պարզ է դաշնում: Ուսանողը երկուս է ստացել. նրան շատ հեշտ է նկարել, թղթի վրայի երկուս՝ նույնական, սակայն շատ դժվար է նկարել երկուս ստացող ուսանողին. հենց այդ է ֆոտոֆունալիստիկան, -բացատրում է լուսանկարչության դասախոս Կարեն Գրիգորյանը:

«Բոլոր ժամանակներում մարդկությունը ցանկանում է տեսնել ճշմարտությունը: Լուսանկարչական ճշմարտությունը, ի տարբերություն գրավոր խոսքի, չունի լեզու և ժամանակ: Այդ պատճառով լուսանկարը գրեթե միշտ հասկացվում է: Շուլքա հիշեցնող դեղին մամուլի և թվանշային պատկերների փոխակերպումների այս դարաշրջանում ֆոտոֆունալիստները պետք է ճշմարտությունը պատմեն, -նշում է Նարեկը:

Թե երբ է առաջին ֆոտոպարատը մտել Հայաստան կամ երբ է առաջին լուսանկարիչը նկարել Հայաստանում, հայտնի չէ, սակայն հայտնի է, որ 1890-ական թվականներից երևանում լուսանկարչությունը զարգացել է երկու հիմնական ուղղություններով՝

թիմանկարային և տաղավարային: Բացի տաղավարներից, 20-ոդ դարասկզբին երևանում գործում էին «Սյուրպիզնիկներ» և «Մինուտչիկներ»: «Սյուրպիզնիկները փայտաշեն ֆոտոխցիկներով լուսանկարիչներ էին, ովքեր քաղաքի ագիմերում, տեսարժան և մարդաշատ վայրերում «անմահացնում էին ցանկացողներին, իսկ լուսանկարը տալիս էին հաջորդ օրը: «Մինուտչիկների դեպքում լուսանկարը տրվում էր նոյն պահին:

Երևանում պահպանված ամենահին լուսանկարչատունը Արովյան փողոցում՝ «Մոսկվա կ/թ-ից մի փոքր ներքև գտնվող ֆոտոն է, որը պատկանում է Խանոյաններին: Այն հիմնադրել է Գաբրիել Խանոյանը 1929 թ.-ին: Այսօր լուսանկարչատունը դեկավարում է Գաբրիել Խանոյանի թոռը՝ Արմենակ Խանոյանը: Այս լուսանկարչատանն է գտնվում 130-ամյա գերմանական «Կոդակ» լուսանկարչական սարքը, որը Դայաստանում միակն է:

«Ֆոտոֆունալիստը միշտ «որսում է լուսանկարներ, որոնք պատմում են ամենօրյա հակամարտությունների ու հասարակության ձեռքբերումների մասին: Ֆոտոֆունալիստի աշխատանքը նույնիքան վտանգավոր է, որքան ոստիկանի կամ հրշեցի աշխատանքը: Եվ այդ պատճառով էլ տարեկան տամսյակ ֆոտոլագրողներ են զոհվում իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս, -ասում է Գրիգորյանը:

«Ես լուսանկարում եմ այն, ինչ ցանկանում եմ և ազատ եմ իմ ընտրության մեջ: Ես լուսանկարիչ եմ, ով իր հաճույքի համար է լուսանկարում, ոչ թե մասնագիտությունից ելնելով, ինչպես շատ ֆոտոֆունալիստները: Շատերի կարծիքով՝ ֆոտոֆունալիստը հասարակության ծառան է և պետք է միշտ սպասարկի նրան, և նմանեցնում են մատուցողի աշխատանքին, ով միշտ պետք է սպասարկի, որովհետև լուրջ երթեք կանգ չի առնում, և դու պետք է միշտ ժամանակի մեջ լինես, սակայն ավելի հաճելի է, երբ դու չես նկատում այդ ժամանակն ու տարածությունը և շարժվում ես առաջ՝ բաց չթողնելով ոչինչ, -միտքն է ամփոփում Նարեկը:



Արմինե Կարապետյան
ԵՊՀ Ժուռնալիստիկայի
Փակուլտետ

Սոսեի «մոխրագույն» գրիչն ու մայրամուտը



«Խոստովանեմ, որ իմ բախտն այնքանով բերեց, որ ինձ համար արդեն ճակատագրական համարվող այդ օրը նա հագել էր ոչ թե ուրիշ գույն, այլ հենց մոխրագույն: Եվ առաջին անգամ բոլորովին անծանոթ այդ տղայի մասին պիտի ասեի.

-Ահա և նա՝ «Մոխրագույնը ... :

Տարիներ անց հենց այս տողերով իրանահայ բանաստեղծուի Սոսե Պողոսյանը պիտի բացատեր իր առաջին՝ «Մոխրագույնը ժողովածուի՝ շատերին խորհրդավոր թվացող վերնագիրը և այն նվիրեր հենց նույն «հարազատ անծանոթին»:

Սոսեն սկսել է ստեղծագործել դեռևս դպրոցական տարիներից: «Իմ առաջին սիրո մասին գիտեինք միայն ես և օրագիրս, մինչև Սոնիկը՝ թեռուս կինը, կարդաց նրան նվիրված առաջին բանաստեղծություններս և առաջարկեց տպագրել դրանք, -պատմում է Սոսեն:

Այսպիսով, Թեհրանի «Ալիք թերթում տպագրվում են նրա առաջին բանաստեղծությունները:

2004-ին Սոսեն առաջին անգամ մի խումբ գերազանցիկ աշակերտների հետ այցելում է Հայաստան: Երկրորդ անգամ հայրենիք է գալիս 2005-ին՝ մասնակցելու ՀՀ Կոթուրյան և գիտության նախարարության կազմակերպած Համահայկական 2-րդ օլիմպիադային և ճանաչվում «Լավագույն ասմունքող»:

Հայաստան գալու և այստեղ ուսանելու որոշումը, ըստ երիտասարդ բանաստեղծուինու, եղել է շատ հանկարծակի. «Մի օր տուն եկա ու հայտարարեցի, որ

գնում եմ Հայաստան՝ հայագիտություն ուսանելու: Ծնողներս շատ զարմացան, սկզբում դեմ էին, քանի որ ընտանիքի միակ աղջիկ զավակն էի և երբեք ընտանիքից հեռու չէի ապրել:

2006-ին Սոսեն արդեն ԵՊՀ Հայ Բանասիրական ֆակուլտետի ուսանողություն էր: «Հայաստան գալս շատ մեծ ազդեցություն ունեցավ ինձ վրա. այստեղ ես ծևավորվեցի որպես անհատ և սովորեցի ինքնուրույն ապրել: Մենակ մնալս ինձ օգնում է ստեղծագործել, - ասում է Սոսեն:

Սոսեի բանաստեղծությունների առաջին ընթերցողներն ու քննադատներն ընկերուի հինգներն են՝ համակուրսեցիները: Սոսեն հաճախ է զանգում նրանց ու կարդում իր՝ րոպեներ առաջ գրած բանաստեղծությունը: Ու թեև նա հիմնականում ստեղծագործում է գիշերը, երբ մենակ է լինում, սակայն ընկերուի հինգներից մեկին՝ Ելենային, «բախտ է վիճակվել մեկ անգամ ներկա գտնվել Սոսեի՝ «Սուսանների այցելությանը»: «Սոսեն կարծեն վերացած լիներ, ինձ չէր տեսնում և չէր լսում, -պատմում է Ելենան: Իսկ Սոսեն ավելացնում է՝ «Իրոք, ոչինչ չեմ գգում ստեղծագործելիս, նույնիսկ ժամանակի զգացողությունն եմ կողընում: Երեմն ողջ գիշեր գրում եմ և միայն լուսաբացին եմ գգում, որ գիշերն անքում եմ անցկացրել:

Ընկերները ոչ միայն Սոսեի առաջին ընթերցողներն են ու անգիր գիտեն նրա բանաստեղծությունները, այլև հաճախ ոգեշնչել են նրան ու ստիպել ստեղծագործել: «Զգում էի, որ համակուրսեցիներիս դուր են գալիս բանաստեղծություններս, ու ամեն օր ինձ տեսնելիս հարցնում էին՝ որևէ նոր բան գրել են, թե ոչ: Այսպիսով, ինքը ինձ պարտավորված է զգում ինչ-որ բան գրել, -պատմում է նա: Աստիճանաբար Սոսեի ստեղծագործությունների մասին տեղեկանում են նաև դասախոսները: Եվ, ի վերջո, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալ. Սակարյանը, լսելով Սոսեի բանաստեղծությունները, առաջարկում է գրքովել տպագրել: «Իսկ գրողների 2-րդ համագումարի ժամանակ ծանրթաց նկարիչ Գևորգ Մշեցու հետ, ով, կարդալով գործերս, խոստացավ նկարազարդել գրքովել, -պատմում է Սոսեն, իսկ գրքի շապիկի խորհրդավոր պատկերը բացատրում այսպես. «Մայրամուտի կրքոտ գույններին փորձել ենք հակադրել «Մոխրագույնի սառնությունը»:

Գրքի խմբագրականում Ալ. Սակարյանը գրել է. «Ես ինձ երջանիկ եմ զգում, որ դասնում եմ Սոսե բանաստեղծությունները գրական նախաշավիղը ողջունողներից առաջինը»:

Սոսեի ստեղծագործություններում շատ են մայրամուտի և գիշերվա պատկերները, քամի որ մայրամուտը ոգեշնչման աղբյուր է երիտասարդ ստեղծագործողի համար: Մայրամուտին փոխվում է Սոսեի տրամադրությունը, և նա մայրամուտի գույնների մեջ սկսում է տեսնել այն նրբերանգները, որոնք նրան շրջապատողները դժվարանում են նկատել: Իսկ գիշերը, երբ Սոսեի բնակարանի պատուհանից չի երևում լուսինը, նա դուրս է գալիս լուսինը որոնելու:

Մարիա Կարաթորոսյան

Ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ուսանողների վրա

«Երբ հինք մեռել է, իսկ նորը դեռ չի ստեղծվել» . այսպես էր բնութագրել «ճգնաժամը 20-րդ դարի իտալացի տնտեսագետ Անտոնիո Գրամշինը, որի մեկնարանությունն արդիական է նաև այսօր՝ Համաշխարհային Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններուն, երբ կապիտալիստական աշխարհն ընկել է նոր փնտրութեների մեջ, քանզի ազատական տնտեսական համակարգն այլևս չի արդարացնում իրեն, և նախկին ազատ տնտեսության ջատագովները դարձել են սոցիալիստներ (ընկերվարներ)՝ իրենց գործունեության մեջ օգտագործելով պրոտեկցիոնիստական (հովանավորչական) տնտեսության լայն շրջանակներ ընդգրկող քաղաքականություն:

Ներկայիս Համաշխարհային Ֆինանսատնտեսական ճգնաժամից անմասն չմնաց Հայաստանի Հանրապետությունը, որը, չնայած ամբողջությամբ ինտեգրացված չէ Համաշխարհային Ֆինանսական կառույցներին, այնուամենայնիվ մեզ էլ բաժին հասավ:


Ֆինանսատնտեսական ճգնաժամը համընդհանուր բնույթ ունի և իր ազդեցությունն է թողոնում հասարակության բոլոր խմբերի վրա (այդ թվում՝ ուսանողների), ինչը մեծամասն արտահայտվում է առանձին անձանց և կազմակերպությունների եկամուտների կրծատմամբ: Ուսանողներն ամողջությամբ ինտեգրված չեն տնտեսության մեջ և, անշուշտ, ճգնաժամի ուղղակի ազդեցությունը չեն կրում (աշխատանքի կորուստ, հարկադիր պարապուրո, եկամուտների կրծատում և այլն):

Այնուամենայնիվ հնչ ազդեցություն ունեցավ ֆինանսատնտեսական ճգնաժամը ուսանողների վրա.

❖ Ճգնաժամի ազդեցության գլխավոր հետևանքն ուսման վարձերի ուշացումն է, ինչը պայմանավորված է ուսանողի ծնողի եկամուտների նվազմամբ: Գյումրիի ուսանողություններից Անին նշեց, որը ինքը ևս ուշացրել է ուսման վարձը և փորձել կրթական վարկ ձևակերպել (20-24%-ով), որը, սակայն, չի հաջողվել, քանի որ բանկերը մեծամասն մերժում են կամ էլ պահանջում են ավելի մեծ երաշխիքներ, քան նախկինում;

❖ որպես ճգնաժամի հետևանք՝ ուսանողներից մեկը նշեց կրթարոշակների ուշացումը՝ մոռանալով, որ այն խրոնիկ բնույթ ունի;

❖ համաշխարահին շուկայում նկատվում է ապրանքների և ծառայությունների գների 20-30%-ի չափով իջեցում, ինչը, ինչպես միշտ, չի նկատվում Հայաստանում. մասնավորապես՝ գրենական պիտույքների գները մնացել են գրեթե նույնը, իսկ առաջիկայում էլ կարելի է կանխատեսել գների աճ՝ պայմանավորված դոլարի արժեորմամբ:



❖ մի ուշագրավ փաստ ևս. ուսանողների՝ հատկապես «արտագրող ուսանողների շրջանակներում մեծ պահանջարկ վայելող պատճենահանձան (XEROX) ծավալները ներկայում 30-40%-ով կրծատվել են, ինչը միգուցե ճգնաժամի դրական հետևանքների շարքին կարելի է դասել, երբ ուսանողները նախընտրում են գրառել դասախոսությունները, քան թե պատճենահանձել կամ էլքի ծածկագրեր (շպարգալկաներ) տպել...

❖ պետական բուհերում և հարակից շրջաններում գործող արագ սննդի կետերում վաճառքի ծավալները նվազել են 30-50%-ի չափով;

❖ գաղտնիք չէ, որ ուսանողները դժվարությամբ են գտնում աշխատանք, իսկ ներկայում ավելի է բարդացել այս խնդիրը: Որոշ ուսանողների հաջողվում է աշխատանք գտնել և այն համատեղել ուսման հետ: Այս հաջողակներից մեկը Վահեն է, ով գրավվում է բջջային հեռախոսների վերանորոգմամբ: Նա նշեց, որ մկանակում է հեռախոսների վերանորոգման պահանջարկի աճ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդիկ գումար չունեն նորը գնելու կամ պարզապես տնտեսում են:

Ներկայում առավել է կարևորվում պետության դերակատարությունը, քանի ճգնաժամի պայմաններում առավել է սրվում սոցիալապես խոցելի խմբերի վիճակը, և ԴՐ կառավարության գերիսնդիրը պետք է լինի սոցիալական-կրթական ծրագրերի իրականացնումը, որը հնարավորություն կտա մեզ՝ ուսանողներիս, առավել բարեմապատ և առանց կորուստների հաղթահարել այս ճգնաժամը: Մասնավորապես առաջարկվում է:

- ❖ ուսանողներին տրամադրել ցածր տոկոսներով և երկարաժամկետ կրթական և բիզնես վարկեր;
- ❖ կրթաթոշակները բարձրացնել և ժամանակին վճարել;
- ❖ սոցիալապես անապահով ուսանողներին տրամադրել մետրոյից անվճար օգտելու իրավունք;
- ❖ ֆինանսավորել գիտական, մշակութային և ժամանցային ուսանողական նախաձեռնությունները և այլն:

Ուսանողները մեր երկրի ապագան են...

Այս հիվանդությունից մահանում են ավելի շատ, քան քաղցկեղից ու ավտովթարներից

Երկրագնդի յուրաքանչյուր տասներորդ բնակիչ տարապում է հիպերտոնիայով: Մի շարք հիվանդություններ, ինչպիսիք են զարկերակային կարծրախտը, ինֆարկտը, ուղեղում արյան զեղումը, երիկամների բորբոքումը, ամենից առաջ հիպերտոնիայի հետևանք են:

Ամբողջ աշխարհում հիպերտոնիան համարվում է ամենավլանգավոր հիվանդությունը, որի մահացության ցուցանիշն ավելի բարձր է, քան քացկեղինն ու ու ճանապարհային պատահարներինը միասին: Շատ երկրներում կյանքն ապահովագրել ցանկացող մարդու մոտ ստուգում են ճնշումը, և դրա բարձրությունից է կախված ավանդի և ապահովագրությունը:

Որպես հասկացություն՝ հիպերտոնիան ծագել է, եթե բժիշկները սովորել են չափել ճնշումը: 1733 թ. անգլիացի հետազոտող Ստիվեն Խեյլսը անցկացրել է փորձ. նա ծիու ազդրի երակի մեջ մտցրել է ապակե խողովակ և դիտել՝ որքան այն կլցի արյունով: Ի դեպ, գործիքը մշակել է 1896թ. իտալացի մանկաբույժ Ռիվա Ռոչին: Նրա անվամբ արյան ճնշումը սկսեցին նշանակել RR տառերով:

Այսօր արդեն արյան շրջանառության համակարգը մեր օրգանիզմում հանելու կային չէ: Եթե հասուն մարդու արյունատար անոթներն ու մազանոթները միացնեն իրար, կատացվի երկար շրթա՝ 90.000 կմ երկարությամբ, որը 2 անգամ ավելի երկար է հասարակածից:

Մարդ շատ զգայուն է մթնոլորտային ճնշման փոփոխության նկատմամբ: Ճնշման նվազագույն անկման դեպքում ուղեղին ուղարկվում են ազդանշաներ, որոնք կենտրոնական նյարդային համակարգի միջոցով ազդում են արյունատար անոթների վրա՝ դրանք նեխացնելով կամ լայնացնելով: Քանի դեռ այդ մեխանիզմը գործում է նորմալ, նյարդային ցնցումներից, ուրախությունից, վախից կամ սարսափից առաջացած ճնշման կարծատև տատանումներն օրգանիզմի վրա չեն ազդում: Դրությունը վտանգավոր է դաշնում, եթե ճնշումը չի վերադառնում իր սովորական պարամետրերին, և 90.000 կմ երկարությամբ անոթների ցանցը դադարում է առանձգականորեն արձագանքել գրգռիչներին:

Ո՞ր ճնշումն է համարվում նորմալ առողջ մարդու համար: Ըստ սրտաբանների՝ առողջ է համարվում այն մարդը, ում ճնշումը չի անցնում 140/90-ը: Հիպերտոնիան սկսում է 160/95 ճնշումից: Առանձնապես անհանգստացնում է ճնշման 2-րդ ցուցիչի բարձրացումը: Ակզրունքորեն, այն երբեք չպետք է 95-ից ավել լինի: 50 տարեկանից հետո ճնշումը բարձրանալու միտուն է նկատվում: Տարբերում են հիպերտոնիայի մի քանի տեսակներ՝ ախտանշական, առաջնային և երկրորդական: Երկրորդական հիպերտոնիան, որը կոնկրետ հիվանդության հետևանք է, հայտնաբերվում է հետազոտման ժամանակ: Իսկ ահա առաջնային

հիպերտոնիան կարող է երկար տարիներ մնալ չորոշված: Ախտանշական հիպերտոնիան երիկամների, գեղձերի հիվանդության հետևանք է: Յամաշշարհային բժկությունը դեռևս չի կարողացել որոշել հիպերտոնիայի առաջացման պատճառները: Արդյո՞ք դրանք առաջանում են նյարդային համակարգի խախտման, կյանքի պայմանների կամ բնակության վայրի աշխարհագրական դիրքի պատճառով: «Մասնակցության մեջ կարելի է մեղադրել բոլոր այս պատճառները միասին և յուրաքանչյուրն առանձին: Եթե դուք տառապում եք հիպերտոնիայով, կարևոր է սահմանափակել աղի օգտագործումը: Եթե ամեն օր



օգտագործեք 3գ-ից ոչ ավելի կերակրի աղ, կարող եք առանց որևէ դեղի իջեցմել ծեր ճնշումը:

Որոշ երկրներում արյան ճնշման կանոնավոր և հաճախակի չափումը համարվում է նորմա: Օր՝ ԱՄՆ-ում ճնշումը չափում է ոչ միայն թերապևտը, այլև մաշկաբանը և ատամնաբույժը: Շատ քաղաքներում արյան ճնշումը չափելու գործիքներ կամ նույնիսկ փողոցային հատուկ խցիկներում: Դրանցից կարող է օգտվել ամեն որ: Շատերը վախենում են, որ այդպիսով կշատանա մելանադուների թիվը, բայց այդ անհանգստություններն անհիմն են: Դրա փոխարեն հաջողվեց հայտնաբերել մինչ այդ իրենց հիվանդության մասին չկասկածող հիպերտոնիկներին:

**Արաքսյա Մելքոնյան
ԵՊՀ Ժուռնալիստիկայի Փակուլտետ**

Թատրոն, թե՞ սերիալ

Գործող անձիք

Հայկ

Դ...յան- Հայկի հայր

Աշոտիկ

Վազգեն

Սևազգեստ, սպիտակազգեստ

Բակի Երեխաներ

Տեսարան 1-ին

(Բակում հավաքված 7-10 տարեկան տղաները, ամենօրյա ֆուտրովը թողած, ինչոր հարցեր էին քննարկում: Քննարկումների ընթացքում լսվում էին նման արտահայտություններ՝ «Երեկ Դոքվազիկի սերիալը տեսա՞ք» (Դո.Քվազի.Կ - Դոն Քվազի Կարլեռնե, «Քվազի թարգմանաբար նշանակում է Կեղծ) ... «Ո՞նց սպանելուց հետո Արգարը հետքերը թաքցրե՞ց, որպեսզի Դոքվազիկը գլխի չընկնի, թե «Քիլերին ովկ է ուղարկել և այլն... որոշ ժամանակ անց Երեխաները սերիալի քննարկումներն արդեն ավարտել էին. իսկ նրանցից մեկը շարունակում էր լրել:

Աշոտիկ- Հայկ, դու ինչու՞ չես խոսում: Այդ սերիալը չե՞ս նայում:

Հայկ- Չե: Հայրիկս ասում է, որ այսօր իսկական դերասանական արվեստը թատրոնում է, քանի որ այնտեղ մարդիկ բարոյապես կրթվում են, իսկ այդ սերիալները մեզ՝ փոքրերիս, փշացնում են: Հայրս գիտի, դե նա թատրոնի դերասան է (6-ամյա Վազգենը կամացուկ հարցնում է «բարոյապես կրթվելն ի՞նչ է... սակայն նրան ուշադրություն չեն դարձնում):

Աշոտիկ- Իսկ նայրս ասում է, որ երբ մեր հարևան Գևորգի հայրը թատրոնից տեղափոխվեց սերիալ, սկսեցին կարգին փող աշխատել: Գիտե՞ք, թե Գևորգը հիմա ինչ գեղեցիկ սպորտային կոշիկներ է հագնում, լողի է գնում, համ էլ ամեն օր միս են առնում:


Հայկ- Յորս էլ են առաջարկել, բայց նա չի ուզում համաձայնվի. ասում է, որ իրեն չի դավաճանի: (Բոլորն ակամայից նայում են Հայկի հնամաշ կոշիկներին ու էժանագին շորերին)

(Փոքրիկ Վազգենը կամացուկ քաշում է Հայկի թևից ու ասում. «Հայկ, Հայկ, որ հայրիկը դոքվազիկ-դոքվազիկ խաղա, դու էլ նոր կոշիկներ կունենա՞ս ...»)

Տեսարան 2-րդ

Դ...յան իր համեստ սենյակում նստած ինքնիրեն ցածր քրեմնջում է:

Դ...յան- 30 տարի է, ինչ աշխատում են թատրոնում: Երբ առաջին անգամ զգացի, որ ներկայացումից հետո հանդիսատեսին խոնարհվելիս ծափերն ուժգնացան, սիրեցի այդ ծափերը, սիրեցի իմ կոչումը, նվիրվեցի բեմին, որտեղից իմ խաղով մարդկանց



հոգիներն էի կրթում, նրանց հոգիներին թևեր էի տալիս, որ թռչեն... թռչեն... էի... մեծ էր նվիրումն... իսկ այժմ... ինձ առաջարկում են սերիալում նկարահանվել, որտեղ պետք է մարմնավորեմ մի ժարգոնային արտահայտություններ օգտագործող հանցագործի...
(հայուցինացիայի արդյունքում նրա աջ ու ձախ ուսերին հայտնվում են սևազգեստն ու սպիտակազգեստը)

Սևազգեստ- Համաձայնվի՞ր Դ...յան, ի վերջո այսօր հասարակության ծափերին արժանանում են նրանք, ովքեր հանդես են զալիս հենց այդ նույն հասարակությունը փչացնող մարդկանց կերպարներով: Համաձայնվի՞ր, և մի քանի ամիս անց նույնիսկ բակերում Երեխաները բազմաթիվ անգամներ կերպնեն քո ժարգոնային թևավոր արտահայտությունները: Համաձայնվի՞ր, քանի որ մարդկանց հոգեկան անկումն այսօր ստիպում է նրանց հիանալ սերիալային այն կերպարներով, որոնց «տնավարի խոսքը, առօրյայի հոգսերում խեղդված տեսքն ու հոգնածությունն այնքան հարազատ ու մոտ են նրանց կարգավիճակին: Եվ հեռուստացույցների դիմաց նստած՝ նրանք ոչ թե դիտում են հետաքրքիր սյուժեով մի սերիալ, այլ իրենց են գտնում այդ կերպարների բույլում: Եվ յուրաքանչյուրը կիսում է իր նմանակ կերպարի դժբախտություն ու երջանկությունը... (ցինիկ ծիծաղով ավելացնում է) կամ Դժբախտ երջանկությունը...
(Սպտակազգեստն ընդիմատում է զայրացած)

Սպիտակազգեստ- Մի՛ համաձայնվի՞ր, Դ...յան: Հասարակությունն այսօր բարոյական ու հոգեկան ճահճի մեջ է: Իսկ այդ ամենը մղում է նրանց այդ ճահճի խորքերը: Յիշի՞ր, հիշի՞ր, թե ինչպիսին էիր թատրոնում. նույնիսկ ամենալկտի ու բացասական կերպարներիցդ դասականի շունչ էր «հոսում: Քո խաղով ու նվիրումով կրթում էիր հանդիսատեսներիդ հոգիները, նրանց գիտակցության էիր հասցնում համամարդկային խնդիրներ ու խորը փիլիսոփայական իհմք ունեցող հարցադրումներով: Եվ այժմ պիտի թողնես այդ ազնիվ գործի ու... (նրան ընդիմատում է Սևազգեստը, և երկուսով սկսում են բարձրաձայն իրենցը պնդել: Դ...յանը փակում է ականջները.... «լոենեք»)

(Քիչ անց ներս է մտնում որդին՝ Հայկը)


Հայկ- Հայրի՞կ, ինձ համար կոշիկներ կգնե՞ս...



ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բիթլզագիտություն՝ Լիվերպուլի համալսարանում»

Թեև աշխարհահոչակ «Բիթլզ» խմբի լուծարումից անցել է 40 տարի, սակայն բրիտանացի երաժշտասերները համարում են, որ բգեցների կյանքի ու գործունեության մասին թիզ բան է ասվել ու գրվել: Լիվերպուլի համալսարանը մագիստրոսի աստիճան կշնորհի այն ուսանողներին, որոնք ուսումնառության ընթացքում փայլուն գիտելիքներ ծեռք կրերեն հայտնի քայլակի գծով: Դամալսարանի երաժշտագիտական բաժնի դասախոս Մայք Բրուկենի խոսքով՝ «Բիթլզի մասին գրվել է ավելի քան ուր հազար գիրք և ցարու ոչ մի լուրջ հետազոտություն չի կատարվել: Այդ իսկ պատճառով որոշել ենք բացել «Բիթլզ ժամանակակից երաժշտություն և հասարակություն բաժնը: Բրուկենը լիահույս է, որ նոր բացվող բաժնի նկատմամբ հետաքրքրություն կցուցաբերեն ոչ միայն բրիտանացիները, այլև այլազգիներ:»




Գունվել է Շեքսպիրի իրական դիմանկարը

Լոնդոնում առաջին անգամ ներկայացվել է ամենահյայտնի անգլիացու՝ Վիլիամ Շեքսպիրի կենդանության օրոք արված միակ դիմանկարը: Մասնագետները համոզված են, որ կտավը ստեղծվել է 1610 թվականին, երբ դրամատուրգը 46 տարեկան էր: Նույնիսկ առաջին հայացքից ակնհայտ է, որ պատկերված տղամարդը խիստ տարբերվում է թատերագրի՝ մեզ ծանոթ ավանդական պատկերներից, որոնք ստեղծվել են նրա մահից հետո: Բացառիկ դիմանկարն ավելի քան երեք հարյուր տարի պատկանել է բրիտանական թոր լուսանիքին, որոնք չեն ել ենթադրել, թե ինչպիսի գանձ ունեն իրենց հավաքածուում:



ԱՄ-ի նախագահի գրական թերումները



Բարար Օքաման կարող է արժանանալ բրիտանական հեղինակավոր գրական մրցանակի: Միացյալ Նահանգների նախագահը ներկայացվել է «British Book Awards 2009» մրցանակաբաշխության՝ միանգամից երկու անվանակարգում՝ «Լավագույն հեղինակ» և «Տարվա ինքնակենսագրություն»: Օքաման գրել է «Դուքսի հանդգնություն քաղաքական աշխատությունը» և «Դուքս երազանքները ինքնակենսագրական ի հուշապատումը»: «Լավագույն հեղինակ» անվանակարգում Օքամայի գրական գիսավոր հակառակորդ է համարվում Ստեֆանի Մեյերը:

Հայերը՝ «Քրդստանի խորհրդարանում»

Յուսիսային Իրաքի քրդական վարչակազմի խորհրդարանը որոշել է շրջանի հայ բնակչությանը հնարավորություն տալ մայիսի 19-ին կայանալիք ընտրությունների միջոցով մուտք գործել օրենսդիր մարմին: Ըստ տեղական աղբյուրների՝ քրդական վարչակազմի խորհրդարանը որոշել է 5-ական տեղեր հատկացնել քաղդեացիներին, բուրքմեններին և ասորիներին: Դայերին հատկացվելիք տեղերի մասին լուրեր չկան:

«Ե՞նչ օգուտ, եթե մարմինը նիհարի պահրով, իսկ հոգին գիրանա մեղքերով

**«Մեկը կարող է կենդանու միս չուտել, բայց անընդհատ իր եղբոր միսը ծամել
եզնիկ Կողբացի**

«Մենք մեծ հույս ունենք, որ շատ երիտասարդներ կիետևեն մեր օրինակին և կսովորեն ճիշտ պաս պահել, այլապես մեր օրերում շատ աղջկներ պասին որպես դիետայի նոր ձև են մոտենում, - մեզ հետ զրուցում ասաց 27-ամյա Աստղիկ Հունանյանը:

Աստղիկն իր ընկերների հետ «Վայելում է Մեծ Պահրի շրջանը, քանի որ այս շրջանը ամեն մի հավատացյալի համար մեղքից ազատվելու հիանալի առիթ է : Նրանք հինգ մտերիմ ընկերներ են՝ Աստղիկը, Վարդուհին, Արմենը, Յարությունը և Կարենը: Երիտասարդներն այնքան էլ չեն ցանկանում զրուցել պահրի մասին, քանի որ «Ճիսուս պատվիրում է, որ պետք չէ աղաղակել այդ մասին: Յուրաքանչյուրը պետք է ինքն իր հոգու հանգստության համար պաս պահի և ոչ թե ուրիշներին որևէ քան ապացուցելու համար :

Մեծ Պահրի 7 կիրակիների միջոցով Յայոց Եկեղեցին ներկայացնում է սուրբգրային հիմք ունեցող պատվիրանազանցության ու անկնան, աստվածորոնողության և աստվածային նախախնամության փրկագրության ողջ ընթացքը: Նրանք որոշել են Մեծ Պահրի յուրաքանչյուր կիրակին ուխտագնացության կատարել դեպի Յայաստանի տարբեր սրբատեղիներ: Բուն բարեկենդանի կիրակին նրանք անցկացրել են Մայր Արոռ Սուրբ Եջմիածնում, իսկ Արտաքսան կիրակին՝ Խոր Վիրապում: Նրանք հանգված են, որ միայն «Ճիշտ պահեցողությամբ և աղոթքներով ծշմարիտ քրիստոնյան կարող է չարի փորձություններին դիմանալ և հաղթանակած դուրս գալ :

«Ես, Արմենն ու Կարենը իրար վաղուց ինք ճանաչում: Մեզ երեքիս համախմբում է հավատքը առ Աստված և այն, որ իրար ճիշտ ենք հասկանում: Այսօր քիչ տղաներ կարող են հարգանքով մոտենալ այն փաստին, որ ես Եկեղեցում կանգնում եմ ու բարձրածայն հոգւոր շարականներ եմ երգում: Իսկ նրանք հասկանում են, քանի որ նրանք էլ են նույնը անում, - պատմում է Յարությունը:

Իսկ Աստղիկն ավելացնում է, որ «մի օր, երբ ես ու Վարդուհին Եջմիածնի Գայանե Եկեղեցում նստած էինք, երեք երիտասարդ մտան Եկեղեցի, կանգնեցին խորանի առաջ և սկսեցին երգել և բարձրածայն աղոթել: Մեզ շատ հետաքրքրեց: Դուրս Եկանք նրանց ետևից ու զարմանալիորեն զրուցի բռնվեցինք՝ իրար բոլորովին չանաչելով... թե որտեղից այդքան թեմա գտանք զրուցելու, մենք էլ չիմացանք :

Այդ օրվանից ամցել է երկու տարի: Այսօր այս երիտասարդները չեն պատկերացնում իրենց կյանքն առանց մեկը մյուսի:

«Ճիշտ է, նախևառաջ Մեծ պահրն ընկալվում է որպես կամավոր ինքնազրկում ու զսպածություն սննդի նկատմամբ: Սակայն նա, ով որոշում է պաս պահել,


պետք է հիշի, որ պահրը չի սահմանափակվում միայն կենդանական սննդից հրաժարումով: Այն առաջին հերթին հոգեկան և բարոյական ախտերից ու մոլորություններից, մեղանչական մտքերից, խոսքերից ու գործերից մաքրվելն է, զղմանք և ապաշխարությամբ աստվածահածո և առաքինի կյանքին դառնալը :

Այդ իսկ պատճառով երիտասարդները խորհուրդ են տալիս ֆիզիկապես և հոգեպես պաս պահել, որպեսզի արդյունքը նկատելի լինի:

Պահրն օգտակար է նաև բժշկական տեսակետից, հատկապես Մեծ պահրի շրջանը, քանի որ գարնանամուտն առանց ճարպային, կենդանական սննդի անցկացնելը դրական ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա:

**Ծովինար Հայրապետյան
ԵՊՀ Ժուռանալիստիկայի Փակուլտետ**





Հոգեբանական թես

ՈՐՔԱՆՈՎ ԵՄ ՃԱՆԱՇՈՒՄ ԿԱՆԱՑ

1. Վիճակագրության համաձայն կանայք տղամարդկանցից ավելի երկար են ապրում: Զո՞ւ կարծիքով դա հետևանք է.

- ա) Կանացն հոգեֆիզոլոգիական կազմվածքի
- բ) Տղամարդիկ դժվարին իրավիճակներում ավելի մեծ շանքներ են թափում
- գ) Ծանրագույն պրոբլեմներն ընկած են տղամարդականց ուսերին

2. Կնոջն ի՞նչ մասնագիտություն է հարմար.

- ա) Ուսուցչուհի
 - բ) Բժշկուհի
 - գ) Ցանկացած՝ կախված նրա նախասիրություններից
3. Կանացն ու տղամարդկանց խմբերում մտավոր զարգացման աստիճանը որոշող հետազոտություններ էին անցկացվել: Ըստ քեզ, ինչպիսին էին արդյունքները.
- ա) Կանացն արդյունքներն ավելի բարձր
 - բ) Խմբերում եական տարրերությունները չկային
 - գ) Տղամարդիկ ավելի բարձր արդյունքներ ցույց տվեցին

4. Կանայք առաջնորդվում են.

- ա) Զգացմունքներով
- բ) Տրամաբանությամբ
- գ) Զգացմունքներով ու տղամարդաբանությամբ

5. Ո՞վ է կնոջ քո իդեալը.

- ա) Անջելինա Ջոլին
- բ) Մարի Կյուրին (ֆիզիկու)
- գ) Մարգիտ Թետչերը

6. Ցանկացած կիև հարմար իրադրության դեպքում հակվա՞ծ է սիրավեպ սկսել այլ տղամարդու հետ.

- ա) Այն
- բ) Դժվար է ասել
- գ) Ոչ

7. Ի՞նչ է պոլիանդրիան.

- ա) Դին իշխանուհու անուն
- բ) Մի կնոջ ամուսնություն շատ տղամարդկանց հետ
- գ) Կանացի վտանգավոր հիվանդություն

8. Յիստերիան հանդիպում է.

- ա) Կանացն ու տղամարդկանց մոտ
- բ) Միայն կանացն մոտ
- գ) Որոշ տղամարդկանց մոտ

9. Կանացն մոտ տրամադրությունը հաճախ փոխվում է.

- ա) Հորմոնալ կտրվածքի առանձնահատկության պատճառով
- բ) Ներքին կարգապահության բացակայության պատճառով
- գ) Սխալ դաստիարակության հետևանքով



Այժմ ամփոփենք արդյունքները



	ա)	բ)	գ)
1.	2	0	0
2.	0	0	2
3.	0	2	0
4.	0	0	2
5.	0	0	2
6.	0	2	0
7.	0	2	0
8.	2	0	0
9.	2	0	0

0-4 միավոր. Կանացն հոգեբանության մասին քո գիտելիքները դուրս չեն գալիս լայնորեն տարածված պատկերացումների շրջանակներից, որոնք որպես կանոն չեն համապատասխանում իրականության: Ցանապատասխան տեղեկությունների բացակայությունը հանգեցնում է սխալ գործողությունների, այստեղից էլ հսկական հաջողությունների բացակայությունն ու երջանկությունից բավական հեռու լինելը:

6-10 միավոր. Կասկած չկա, որ դու աղջկա հետ շփվելիս կարողանում ես կանխատեսել նրա գործողություններն ու վարքդ համապատասխանեցնել դրան: Սակայն հոգու խորքում կանաց ցածրակարգ էակներ են համարում՝ լցված թերություններով, որոնցից զերծ են տղամարդիկ: Այնուամենայնիվ բացահայտ չեն դրսնորում քայլ համոզմունքը:

12-18 միավոր. Կանացն հոգու իմացությունը շատ զարգացած է քեզ մոտ: Դու վերաբերվում ես նրանց իրեն հավասար հավասարի ու չես առաջնորդվում կանացն վերաբերյալ կարծրացած պատկերացումներով: Յուզական ես, հանդուրժող, սիրում ես, սիրում են քեզ: Եթե քո ըմկերուիկին նույնքան լավ է ճանաչում տղամերին, ձեր հարաբերությունները պետք են, որ շատ երջանիկ լինեն:



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀՈՒՄՈՐ



-Միրելի՞ս, ես չեմ հասկանում, թե դու հնձնից էլ ի՞նչ ես ուզում: Ես ամեն առավոտ սուրճը բերում ու անկողնում քեզ եմ տալիս, քեզ մնում է միայն... աղալը:



Կիմն ամուսնուն հարցնում է.

-Միրելի՞ս, այսօր թերթում կարդացել եմ, որ կանայք տասն անգամ ավելի շատ են խսում, քան տղամարդիկ: Դա ինչից է: Մենք անընդհատ նույն քանը կրկնու՞մ ենք:

-Ի՞նչ ասեցիր: Չլսեցի: Նորից ասա:



Եթե չգիտեք, թե մարտի 8-ին ի՞նչ նվիրեք ձեր կնոջը, ապա գուցե վերջապես հավաքե՞ք տոնածառը:



Ուղեկցողոք տեղեկացնում է.

-Իսկ իհնա, եթե մեր սիրելի կանայք գոնե մեկ ռոպե լրեն, մենք կլսենք Նիագարա ջրվեժի ծայնը:



Աղջիկն ասում է ընկերոջը.

-Արի՛ հանդիպենք ժամը 7-ին: Իսկ եթե մեզնից մեկնումեկն ուշանա... Ընկերն ընդհատում է.



-Այդ դեպքում ես կսպասեմ:

Մի գեշ կին ինքն իրեն նայում է հայելու մեջ ու ասում. -Մարդուս տեղն ա, իրեն ես էլ ա շատ:



Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Ուսանողի Զայն -ը անկախ ուսանողական պարբերաթերթ է: Այն արտահայտում է հայաստանյան բոլոր բուհերում ուսումնառող երիտասարդների կարծիքը՝ անկախ նրանց կուսակցական ու գաղափարական պատկանելությունից: Պարբերաթերթում հոդվածներ են գրում նաև շրջանավարտները՝ առանց տարիքային սահմանափակման: Թերթի խմբագրակազմը պատասխանատվություն չի կրում առանձին հոդվածների բովանդակության հաճար, եթե, իհարկե, այն չի հակասում խմբագրակազմի որոեգործ բարոյական ուղղվածությանն ու չափանիշերին, ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրական ակտերին: Մեր հոդվածագրերը գերծ են մնում անձնական վիրավորանքներով՝ համեմված իրապարակումներից: Մեր թերթը ամբիոն է՝ ուսումնահարված իրավունքներով ուսանողներին: Մենք

պաշտպանում ենք ուսանողի արդար իրավունքը, փաստեր չենք աղավաղում, չենք կեղծում, մենք ուսանողի խոսափողն ենք: Մեզ հետ կարող եք համագործակցել և նամակցել՝ գրելով հետևյալ էլեկտրոնային հասցեին՝

usanooghidzayn@rambler.ru

կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝
(010) 521202

կամ պարզապես այցելել մեր գրասենյակ (հասցե՝ Հանրապետության 30, «Սիմոն Վրացյան կենտրոն»):

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

Խմբագրի՝ Ա.Գասպարյան

Խմբագրական խորիրդի անդամներ՝ Ն.Ծատուրյան, Մ.Կիրակոսյան, Ա.Չարությունյան, Մ.Կարաթորոսյան, Ա.Լալայան, Ս.Պարսյան

Մրբագրի՝ Ա.Չարությունյան

Զեկուրող՝ Ք.Ղազարյան